

տերիտորիայից, Մազկունք գյուղի մոտ գտնվող Մբխլ-Քափա կոչվող բուր-բնակատեղիից, Զր-վարթնոցի շրջակայքից, Վ. Խաթունարի գյուղի հյուսիսային մասի ազատային հողերի տերիտորիայից և այլ վայրերից:

Ինչպես տեսնում ենք, V—IV հազարամյակներում Հայկական լեռնաշխարհի այն վայրերը, որտեղ բնակչության պայմանները հնարավորություններ են բնական վաղ երկրագործական տնտեսության կազմակերպման համար, ըզ-քաղեցված են եղել նստակյաց արտադրող երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղված տեղների կողմից, որոնք կապերի մեջ են եղել հյուսիս-միջագետքյան և արևելյան ցեղերի ու ասիական հետ, կազմելով Առաջավոր Արև-վելքի վաղ երկրագործական մշակույթի տերա-մանիյի մասը: Ասկայն, ինչպես ճիշտ նկատում է Հ. Ա. Մարտիրոսյանը, Հայկական լեռնաշ-

խարհի այս ժամանակաշրջանի մշակույթը չի կրկնում առաջավորասիականը, այլ ներկայաց-նում է միասնական դարգացման բազմաթիվ ինքնուրույն գծեր ունեցող տնտեսական ամբող-ջություն, որը իր հետագա զարգացման նոր ս-րակն է գտնում մ. թ. ա. III հազարամյակի բարձր զարգացման հասած մշակույթում:

Ելնելով հնագիտության կողմից լավ հանաչ-ված ու ժամանակագրված առաջավորասիական մշակութային վերը նշված կենտրոնների հետ Թեղուտի հուշարձանի ելույթների համադրումից, մենք կարող ենք ասել, որ բնակատեղին գոյու-թյուն է ունեցել ոչ հալաֆյան և հյուսիս-արևելյ-յան մշակութային երկարատև ժամանակաշրջա-նի ինչ որ մի հատվածում, այսինքն մ. թ. ա. V հազարամյակի վերջում և IV հազարամյակի կեսին:

Ռ. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Հունդարիայի ակադեմիան շուրջ արևելագի-տական ինստիտուտ Արևելագիտության, այդ թը-վում նաև հայագիտության ուսումնասիրությունը իրականացվում է Իուդապեշտի համալսարա-նում: Հայագիտության ուսումնասիրությունը արտասահմանում սովորաբար տարվում է մշա-կույթի և արվեստի պատմության կամ հնդեվ-րոպագիտության հետ միասին: Սակայն մեզ մոտ, Հունդարիայում, հայագիտությամբ զբաղվում ենք այլ նպատակներով, քան մյուս երկրներում: Հա-յագիտության վերակենդանացումը Հունդարիա-յում վերջին տասնամյակներում պայմանավոր-ված է «ազգային» գիտությունների, ավելի ճիշտ՝ Հունդարիայի վաղ պատմության հետազոտման պահանջներով: Այս պարագան, անշուշտ, մե-զանում ամուր հենակետ է սեղծել հայագի-տության համար, որովհետև դրանով վերջինս պարձել է մեր «ազգային» գիտության զարգաց-մանը օժանդակող գիտական կարևոր մի բնա-գավառ:

Բացի այդ, Հունդարիայում հայագիտության զարգացմանը նպաստում է նաև այն հանգա-մանքը, որ ժամանակին մեր երկրում շատ հայեր են ապրել, որոնց մեծ մասը, զլխավորապես մը-տավորականները, հաստատվել են Բուդապեշ-տում: Աստիճանաբար նրանք ձուլվել են տեղա-ցիների մեջ, մոռացել իրենց մայրենի լեզուն և դարձել հայկական ծագում ունեցող հունդարա-ցիներ: Հայերը զգալի դեր են խաղացել Հուն-դարիայի պատմության մեջ, մասնակցել նրա պաշտպանությանը օտար հարձակումներից, Ուս-տի և նրանց պատմությունը նաև մեր երկրի

պատմությունն է: Բնականաբար, մեզ համար չափազանց կարևոր է հունդարահայ զաղթական-ների պատմության ուսումնասիրման գործը: Սա-կայն ամենազլխավորն այն է, որ առանց հայ ժողովրդի, աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի պատմության ուսումնասիրման անհնարին կլինի զաղափար կազմել արևելյան քաղաքա-կրթության մասին, որ առանց հայկական աղ-բյուրների չի կարելի ամբողջացնել Մերձավոր Արևելքի, Փոքր Ասիայի և Կովկասի բազմադար-յան պատմությունը: Շատ դժվար է պատկերաց-նել, թե ինչպես պետականությունից շատ վա-ղուց զրկված, օտար բարբարոս տիրապետու-թյան տակ ընկած մի ժողովուրդ կարողացել է ստեղծել և պահպանել այդպիսի հսկայական գրականություն, մեծ պատմագրություն, որը կարող է շարժել շատ և շատ ժողովուրդների բարի նախանձը:

Հայագիտությունը Հունդարիայում բավակա-նին տրադիցիաներ ունի: Դեռևս անցյալ դարում մեզանում լուրս են ընծայվել հայագիտական գրքեր և «Արմենիա» անունով ամսագիր: Վեր-ջինս հունդարերեն լեզվով հետաքրքրական նյու-թեր էր հրապարակում հայերի, նրանց պատ-մության ու մշակույթի մասին: Որանից վաթ-սուն տարի առաջ պրոֆեսոր Լուկաս Պատրու-րանյան Բուդապեշտի համալսարանում վեց տարի շարունակ դասավանդել է հայոց լեզու: Սակայն նրանից հետո երկար ժամանակ այդ ուղղու-թյամբ մեզ մոտ ոչինչ չի արվել: Նրկորդ հա-մաշխարհային պատերազմից հետո կրկին հե-տաքրքրություն արթնացավ հայագիտության նը-

կատմամբ: Դրան հատկապես նպաստեցին Հունգարիայի գիտությունների ակադեմիայի փոխնախագահ և Արևելագիտական հանձնաժողովի նախագահ, ակադեմիկոս Լայոշ Լիզեցին և պրոֆեսոր Կարոյ Ցեզլեգին:

Եւայց որևէ գիտության զարգացման համար ամենից առաջ անհրաժեշտ է ստեղծել դիտական բազա, գրականություն. այնինչ Հունգարիայում ևուկա Պատրուրանյայի հայագիտական հարուստ գրադարանից միայն հատուկ կենտրոններ էին մնացել: Մեր առաջին խնդիրն էր անհրաժեշտ նյութեր հավաքել գիտական աշխատանքի համար: Այդ գործը մենք զուիս բերեցինք մեկ և կես տասնամյակի ընթացքում՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի, Ալեքսանդր Մյասնիկյանի անվան գրադարանի և Մաշտոցի անվան Մատենադարանի օգնությամբ:

Հայագիտական աշխատանքները մեզ մոտ կենտրոնացված են Բուդապեշտի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի կովկասագիտական բաժնում: Արդեն տասը տարի է, որ ես արևելագիտական ամբիոնների ուսումնական ծրագրին համապատասխան հայագիտություն եմ դասավանդում:

Մեզ մոտ արևելագետներ պատրաստվում են միայն գիտության բնագավառում աշխատելու համար: Դրա համար էլ արևելագետ ուսանողների թիվը շատ սահմանափակ է. նրանց ընդհանուր թիվը Միջին Ասիայի լեզուների ու թուրքական բանասիրության ամբիոններում և պարսկագիտական բաժնում 12—15 հոգի է:

Երկու տարին մեկ անգամ այս ուսանողներից ընտրում ենք երկու հոգու, որոնք սկսում են ուսանել հայագիտություն: Առաջին տարում ներքանք սովորում են գրաբար, ծանոթանում հայոց պատմությանն ու հայ պատմիչներին, երկրորդ տարում նրանց համար դասավանդում ենք հայագիտության այն մասը, որը անհրաժեշտ է տվյալ արևելագիտական դիսցիպլինի համար. մոնղոլագետները, օրինակ, ուսումնասիրում են թաթար-մոնղոլական տիրապետության շրջանի պատմիչների գործերը (Կիրակոս, Վարդան, Գրիգոր Ակնեցի), արաբագետները՝ Սերեոսի և Ղևոնդի պատմությունը, թուրքագետ լեզվաբանները՝ միջին հայերենը և հայատառ ղփչաղերեն հուշարձանները:

Խոսակցական հայերեն դասավանդում է Պալ Սալմաշին, որը երեք տարի պարապել էր հայագիտությամբ Երևանում, իրեն պրոֆեսոր Անտո Արրահամյանի ասպիրանտը:

* * *

Հայագիտական բնագավառի մեր պրպտումները ամենից առաջ վերաբերում են V—XIII դարերի հայ պատմիչների գործերին, որովհետև

դրանք լավագույն սկզբնաղբյուրներ են հունգարական վաղ պատմության համար:

Մարկվարտի հետազոտություններից արդեն դիտենք, որ այս շրջանի հայկական աղբյուրներում անմիջականորեն հունգարներ անվանումը բացակայում է. այս հասկանալի է, որովհետև իրենց այժմյան երկիրը գրավելուց (896 թ.) առաջ հունգարները Հարավային Ռուսաստանում խազարական հպատակներ էին, իսկ խազարների մասին հայկական աղբյուրները շատ տվյալներ են պարունակում: Այս ուղղությամբ նշանակալից աշխատանք է կատարել պրոֆ. Կարոյ Ցեզլեգին: Հենվելով, ի միջի այլոց, հայկական աղբյուրների վրա, իր քննադատական հետազոտությունների մեջ Կ. Ցեզլեգին ցույց է տվել, թե ինչ ժողովուրդների տարրեր էին ապրում Կովկասի հյուսիսային մասերում V—IX դարերում: Կ. Ցեզլեգիի մի շարք հոդվածները նախապատրաստական քայլեր էին նրա «Տափաստանի ժողովուրդների պատմությունը մինչև խազարները» և «Խազարների պատմությունը» զխավոր աշխատությունների համար, որոնք շուտով լույս կընծայվեն: Այս գործերի համար կարևոր սկզբնաղբյուրներ են ծառայել VII դարի հայկական «Աշխարհացույցը», Սերեոսի, Ղևոնդի, Մովսես Կաղանկատվացու (Դասխուրանցու) և այլ պատմիչների գործերը:

Կովկասի հյուսիսային ազգերին՝ վերաբերող հայկական աղբյուրների ուսումնասիրությունը, սակայն, սրանով չի սպառվում: Այդ աղբյուրների ներքին կապերի հետազոտությունը նույնպես լինելու է ապագայի մեր խնդիրներից մեկը: Հենց այս նպատակով էլ Մատենադարանում ես վերջերս ուսումնասիրում էի VIII դարի պատմիչ Ղևոնդ վարդապետի պատմությունը, որը ցանկանում ենք թարգմանել ու հրատարակել ածգլներով:

Հայ պատմիչների գործերը կարևորագույն նշանակություն ունեն նաև հին պատմությունը հետազոտողների համար: Առանց հայկական «ոսկեդարի» պատմական գործերի չի կարելի տալ Մերձավոր Արևելքի վաղ պատմության ճշգրիտ պատկերը: Մենք որոշել ենք հունգարներին թարգմանությամբ հրատարակել այդ ժամանակաշրջանի պատմիչներ Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի և առաջին հերթին՝ ան-

¹ Szécs Studia Antiqua, Budapest, II, 1955, 121—140. MTA I. Oszt. Kéz. XV. № 1—2. 107—128. Khazar Raids in Transcaucasia in A. D. 762—764. Acta Orient. Hung. XI (1960). Bemerkungen zur Geschichte der Chazaren, Acta Orient. Hung. XIII (1961), 239—251. Τεραταζονς acta Antiqua (Budapest), X (1962), 79—84.

գերազանցելի Մովսես Խորենացու աշխատությունները, ծառայողները սկսել են Խորենացու պատմության թարգմանությունը, մյուս գործերի թարգմանությունը մասնակցելու է Պալ Սալմաշին:

Պատմա-լեզվագիտական աշխատանքի բնագավառում մեր խնդիրն է նաև երկրորդ հազարամյակի ժամանակագրությունների ուսումնասիրությունը: Հունգարների պատմության լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն մոնղոլական շրջանի հայ պատմիչների գործերը: Հայաստանում մոնղոլ-թաթարների կատարած ներխուժման ուրույն առանձնահատկությունները ես արդեն փորձել եմ օգտագործել իմ մի հոդվածում՝ հունգարական պատմության մի քանի հարցերը լուսաբանելու համար²: Սակայն տակավին հետազոտական աշխատանքի մեծ խնդիրներ կան:

Ուշ շրջանի պատմության համար ես հայկական աղբյուրները կարևոր նյութեր են հաղորդում: Այսպես, ես զբաղված եմ Մատենադարանում նոր լույս տեսած բնագրի՝ Խաչատուր Կաֆայեցու ժամանակագրության ուսումնասիրությամբ, որը լույս է սփռում ոչ միայն Ղրիմի թաթար խաների, այլ նաև Ղրիմի հայերի պատմության վրա: Բնագրի ուսումնասիրությունը զուգահեռ պատրաստում եմ նրա անգլերեն թարգմանությունը:

Հունգարները և հայերը շատ հեռու են ապրել միմյանցից և, նախքան հազարավոր հայ ընտանիքների Տրանսիլվանիա գաղթելը, նրանք չեն ունեցել պատմական ու մշակութային սերտ կապեր:

Հայերի հիշատակումը հին հունգարական ժամանակագիրների մոտ հանրահայտ է: XIII դարի մի քանի փաստաթղթեր վկայում են հունգարահայ գաղութի գոյությունը, գաղութ, որը հունգարների կողքին պաշտպանել է մեր այն ժամանակվա մայրաքաղաք էստերգոմը մոնղոլ-թաթարական ներխուժումից: Վերջերս լծվարանական միջոցներով ես փորձել եմ ապացուցել, որ հայ գաղութի անգամները կարևոր դեր են խաղացել նաև Հունգարիայի բժշկության մեջ³:

Հայ-հունգարական հարաբերությունների մի կարևոր դրվագ են ներկայացնում դեպքերին ժամանակակից Գարրիել Թոխաթեցու ժամանակագրությունը Հունգարիայի XVII դարի հակաթուրքական ազատագրական պատերազմի մասին,

ինչպես և նրա նամակները Վիեննայի պատերազմական խորհրդին, Հայերը կաթեոր դեր են խաղացել հունգարական մայրաքաղաքի ազատագրման գործում 1686 թ.⁴:

Հայ մշակույթի զարգացման պատմության մեջ մեծ է նաև ժամանակին ընկողնային տարրեր քաղաքներում բացված հայկական տպարանների դերը: Մեր հետազոտություններից պարզվեց, որ ամենահռչակավոր հունգարական տպագրիչ Միկլոշ Կիշը 1685 թ. Ամստերդամում տառեր էր պատրաստել հայկական տպարանի համար⁵:

Լեհաստանի հայկական գաղութի կյանքում մշակութային ուղադրավ երևույթ էր Լվովի տպարանը, որի տպագրած գրքերից 1616 և 1618 թթ. լույս տեսած երկու աշխատություններ պահպանվել են միայն մեզ մոտ: Ես զբաղվել եմ այդ տպարանի պատմության հարցերով և հրատարակել եմ հայատառ ղփչաղերեն տեքստի մի մասը⁶:

Մեր հնարավորությունների սահմաններում մենք աչքաթող չենք անում նաև լեզվագիտական բնույթի հարցերը: Հունգարիայում (Տրանսիլվանիա) գոյատևած հայկական գաղութի ծագման պատմական և լեզվական տարբեր հարցերի լուծման համար խիստ կարևոր է նրա հարևան գաղութների պատմության ուսումնասիրությունը: Մենք լայնորեն զբաղվում ենք Ղրիմի, Լեհաստանի և մասամբ Մոլդավիայի հայ գաղութների պատմությամբ: Մեր աշխատանքը, սակայն, մեծ մասամբ լեզվաբանական բնույթի է, որովհետև մենք մեր ձեռքի տակ չունենք պատմական հարուստ աղբյուրներ ու գրականություն:

Հայկական բազմաթիվ բարրառներից մենք հետազոտում ենք Տրանսիլվանիայի հայկական բարրառը: Վերջերս մենք զբաղվեցինք «առտիալի» երեք քույր-բարրառների բառագիտական խնդիրներով: Արևմտահայ բարրառների ուսումնասիրությունը շատ կարևոր նյութ է տալիս արևմտահայ գրական լեզվի զարգացման հետազոտության համար⁷:

⁴ „Новые данные о Габриеле Токате-цн“, ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 1, էջ 103—106; Տես նաև Անձնանունների բառարան, հատ. V.

⁵ Nicholas Mésztfalusi. Kis and Armenian? Book Printing, Acta Orient., Hung., IX, 1959, 63—73.

⁶ „An Armeno-kipchak Print from Lvov“, Acta Orient. Hung., XIII, 1961, 123—130.

⁷ Rearmenisation and Lexicon. (From Armeno-kipchak back to Armenian). Acta Orient. Hung. XIX (1966), 99—115.

² „Szazadok“, Budapest, XLIII, 1958.

³ „Magyar Nvelv. LIV, 1958, 450—460. հմտ. Ն. Ֆոգոլյանի հոդվածը «Բազմալեզու», 1961, էջ 131—134; Ungarisch Katapan, Armenisch Katapan, „Handes Amso-rya“, 1961, 515—520.

Հայկական հնչյունաբանության համար մեծ արժեք են ներկայացնում հայկական տառերով գրված օտարալեզու բնագրերը. պահպանված են այսպիսի բնագրեր մի քանի լեզուներով: Հունգար արևելագետները գրազվում են այդ բնագրերի ուսումնասիրությամբ, որովհետև հայատառ գրությունը տալիս է տարրեր օտար լեզուների այն ժամանակվա արտասանության ճշգրիտ պատկերը⁸, Այսպես, վերջերս ակագ Լ. Լիգետին միջին հայերենի հնչյունաբանական հետազոտությունների օգնությամբ Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ գտնվող բառացանկի հիման վրա հաստատեց XIII դարի մոնղոլական լեզվի հնչյունային կերպարանը⁹:

Հայտնի է, որ Արևելյան Եվրոպա գաղթած և Ղրիմի թերակղզում տարիներ շարունակ զփշաղների մեջ ապրած հայերը գիտեին նաև նրանց լեզուն և իրենց պաշտոնական գրագրությունները վարում էին նաև զփշաղերեն, բայց հայերեն տառերով: Այս փաստաթղթերը բացառիկ արժեք են ներկայացնում զփշաղերեն լեզվի այդ մեծած ճյուղի համար: Ըստ զբաղվել են հայ-ղբաղալ բնագրերի ուսումնասիրությամբ, հրատարակել են մի շարք հոդվածներ¹⁰ և այժմ էլ լույս են ընծայում Կամենեց-Պոդոլսկի հայատառ զփշաղերեն ժամանակագրության հոտինի պատերազմին (1621 թ.) վերաբերող մասը՝ զուգահեռ անգլերեն թարգմանությամբ¹¹:

Հայերենում թուրքերենից փոխառնված բառերը դարասկզբին Հրաչյա Աճառյանի կողմից լրիվ շափով մշակվել են, սակայն թուրքական բարբառներում հայերենից փոխառնված բառերին թիշ ուշադրություն է նվիրված. կան միայն մի քանի բարբառների փոքրաթիվ բառացանկեր: Մենք զբաղվում ենք այս հարցով ևս:

⁸ Turkish Loanwords in Simeon Lehač's Travel Accounts. Acta Orient. Hung. (In Press).

⁹ L. Ligeti, Le lexique mongol de Kirakos de Gandzak. Acta Orient. Hung. XVIII (1955), 241—297.

¹⁰ On the Transcription of Armeno-klipchak. Acta Orient. Hung. XII (1961), 139—161, Hotes on Armeno-klipchak Script and Its Historical Background. In: Vol. 23. Of the „Uralic and Altaic Series“, Indiana University, Bloomington, Ed. by D. Sinor. 145—154. Armeno-klipchak Texts from Lvov (A. D. 1618). Acta Orient. Hung. XV (1962), 291—309.

¹¹ An Armeno-klipchak Chronicle on the Polish-Turkish Wars in 1620—1621. Academy publ. House. Budapest (In Press).

Լեզվի և ազգի պատմության միջև, իբրև մի միջանկյալ հարց, ներկայանում է անունների հետազոտության խնդիրը: Մենք հավաքում ենք հայկական միջնադարյան անձնանունների արեւելյան տարրերը: Մի փոքրիկ հոդվածում մենք արդեն փորձել ենք ցույց տալ, թե ինչ կնճոտ հարցեր են կապված յուրաքանչյուր անվան հետ¹²:

* * *

Մի քանի խոսք էլ գեղարվեստական գրականության թարգմանությունների մասին: Դժբախտաբար, մեզանում ևս սովորույթ է դարձել գեղարվեստական երկերի թարգմանությունները կատարել համաշխարհային ծանոթ լեզուներով կատարված թարգմանություններից: Այս սխալ սովորույթին հետևեց վերջերս նաև «Հայկական հեթաթեների» մի հունգարացի թարգմանիչ, Ռուսական թարգմանությունից հունգարերեն թարգմանված բնագրերը թեև կատարվել են գրական որոշակի հոգածությամբ, բայց և այնպես չեն կարողացել խուսափել բազմաթիվ թյուրիմացություններից. ընդ որում հունգարական տեքստերը ճշգրիտ կերպով չէին պահպանում հայերենի ոճական առանձնահատկությունները: Իմ խիստ քննադատությունը¹³, ըստ երևույթին, որոշ չափով օղնեց գործին, որովհետև հրատարակիչները այժմ իրենց պարտավորված են զգում այս հարցում խորհուրդի հրավիրելու նաև հայագետներին:

Անցյալ տարի մեզ մոտ լույս տեսավ մի գեղեցիկ հատորիկ, որը ներկայացնում է Պարույր Սևակի բանաստեղծությունների հավաքածուն: Տողացի թարգմանությունը կատարված է շատ հաջող և հարազատորեն, Պալ Սալմաշիի կողմից: Նրա համատեղ աշխատանքը առաջնաձևից հունգար բանաստեղծների հետ, որոնք բանաստեղծորեն մշակել են տողացի թարգմանությունը, տվեց գեղեցիկ արդյունք: Պալ Սալմաշին կատարեց նաև մի լավ աշխատանք. նա հունգարերենից հայերենի թարգմանեց այս գարի առաջին կեսի հունգարական մեծագույն գրողներից մեկի՝ Ժիգմոնդ Մորիցի նովելներից մի քանիսը, որոնք լույս տեսան առանձին գրքով¹⁴:

Առաջիկա տարիներին նախատեսվում է հրատարակել հայկական պոեզիայի մի հատընտիր. հին գրականության բաժինը ընտրելու և թարգ-

¹² T a n g s u x in Armenia. Acta Orient. Hung. XVII, 105—112.

¹³ Filológiai Közlemény (Budapest), 1964, № 2, 481—473.

¹⁴ Ժիգմոնդ Մորից, Վերջին բեկյալը, Երևան, 1964:

մանելու եմ ես, իսկ XIX և XX դարերի բաժինը՝ Պալ Սալմաշին:

Վերջերս մի նոր աշխատանք է սկսվել: Կազմվում է հայկական նովելների մի հատրնտիր: Թեև դրա թարգմանությունը կատարվելու է ռուսերենից, սակայն նրա թարգմանիչը մեր լավագույն արձակ-թարգմանիչն է՝ Ի. Մակկային և, բացի դրանից, հրատարակչի հետ համաձայնեցված է, որ կատարված թարգմանությունը հայերեն ընթերցի հետ համեմատելու համար պետք է տրվի Պալ Սալմաշին: Դա, մեր կարծիքով, կապահովի թարգմանության հարազատությունը:

Վերը ներկայացված թվարկումը ընդամենը համառոտ մի ակնարկ է մեր կողմից կատարած աշխատանքի մասին: Մենք հույս ունենք, որ ժամանակի ընթացքում հայագիտության առանձին ճյուղերը Հունգարիայում նորից հարուստ ծաղիկներ պիտի տան:

Նրբ մենք մի քանի տարի առաջ, Հունգարական ակադեմիայի հանձնարարությամբ, կազմում էինք հայագիտության զարգացման 15-ամյա պլանը, առաջին հերթին ի նկատի լինք առնում գիտական առարկաները: Այժմ մենք ուրախ ենք, որ ժամանակի ընթացքում հայկական մշակույթի ժողովրդականացումը այդքան արագ կերպով առաջադիմեց: Հիրավի, Հունգար ժողովուրդը ուրախությամբ է ընդունում հայկական մշակույթի և դրականության պտուղները:

Հայագիտական մեր աշխատանքները Հունգարիայում նպատակ ունեն ոչ միայն մեծացնել հետաքրքրությունը հայոց պատմության և հայ մշակույթի նկատմամբ, այլև ավելի ամրապնդել հայ և Հունգար ժողովուրդների բարեկամությունը, որի ակունքները գնում են դեպի դարերի խորքը:

Պրոֆ. Է. ՇՅՈՒՅ (Բուդապեշտ)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

STUDIA ET ACTA ORIENTALIA, III, 1960. Bucurest, Meridiens Editions, 1961. p. 355 (Société des Sciences Historiques et Philologiques de la R. P. R.—Section d'Etudes Orientales).

Թումինիայի Սոցիալիստական Հանրապետության պատմական և բանասիրական գիտությունների էնկերություն Արևելյան ուսումնասիրությունների բաժանմունքի հանդեսի հերթական երրորդ համարը բովանդակում է արևելագիտական և որոշ շտիպ էլ հայագիտական ուսումնասիրություններ:

Հանդեսի «Հաղորդումներ և մատենագիտական ծանոթություններ» բաժնում զբախտված են շուրջ 30 արևելագիտական ամսագրեր և զրքեր, այդ թվում նաև Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Ս. Անասյանի զրքերը: Հայագիտական տեսակետից հետաքրքիր են Վլադ Բընըցյանուի 2. ձ. Սիրուեու և Գավրիլ Ղաթիկյանի աշխատությունները: «Մխիթար Գոշի Գառաւոտանագրքի հայերեն մեկ ձեռագիրը» (էջ 47—63) հոդվածում Գավրիլ Ղաթիկյանը նկարագրում է Թումինիայի Սոցիալիստական Հանրապետության ակադեմիայի գրադարանում պահված № 20/936 մեծածափալ ձեռագիրը և այն համեմատում բազմաթիվ այլ ձեռագրերի հետ: Հեղինակը քննարկում է շատ հարցեր, այդ թվում՝ քրեքների այդ ժողովածուի նշանակությունը միջնադարյան Հայաստանում և լեհաստանի, Մոլդավիայի ու Տրանսիլվանիայի հայերի կյանքում և այլն: Հոդվածագիրը նշում է, որ 492 էջանոց ձեռագրի 283—407 էջերը բովանդակում են Մ. Գոշի Գառաւոտանագիրքը, մնացած էջերում գտնվում են համավածներ կրոնական զանազան տեքստերից:

Շահեկան են նաև ժողովածուի 65—91 էջերը, որտեղ տպագրված է Դյիա Բընըցյանուի «Ուրարտական արվեստը» ըստ Մովսեսական Հայաստանում կատարված հնագիտական պեղումների» հոդվածը: Հոդվածագիրը մանրամասն նկարագրել է ուրարտական հարտարապետության, քանդակագործության և բրոնզյա զենքերի արվեստի քանդակագործության բազմաթիվ նյութեր: Տպագրված են նաև ուրարտական արվեստի նմուշներից 12 նկարներ:

Հանդեսում հրապարակված են Հ. ձ. Սիրուեու «Կոստանդնուպոլիս քաղաքի անունը հայերեն և թուրքերեն բնագրերում» հոդվածը և «Մի հայտնագործություն Հայաստանում Ջվարթնոցի տաճարի վերաբերյալ» հաղորդումը:

Վլադ Բընըցյանուի «Կատարություն՝ հայ-թաթարական տեղանուններ արժեքավոր հաղորդման մեջ»-ը է տրված, որ վիճելի է այդ տեղանուններ միայն թաթարական ծագումով բացատրող գիտնականների կարծիքը, քանի որ 1064 թ., Բաղրատունյաց թագավորությունը սելջուկ թուրքերի կողմից գրավվելուց հետո, հայերը թաթարներից առաջ Ղրիմի վրայով անցել են Մոլդավիա և լեհաստան, որտեղ հասկանալի XIII դարից սկսած նպաստել են քաղաքների տնտեսական զարգացմանը և XIII դարից այդ անունը գործածել են նաև իրենք: